

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄՆԵՐ

Սույն ինտերնետային կայքը հանդիսանում է “Կապիտալ Ասեթ Մենեջմենթ” փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) պաշտոնական ինտերնետային կայքը:

Ընկերությունը գրանցված և լիցենզավորված է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից: Ընկերությունը “Հայաստանի ֆոնդային բորսա” ԲԲԸ-ի անդամ է:

Սույն ինտերնետային կայքն այցելելը կամ դրանում տեղակայված տեղեկատվությանը, նյութերին, հրապարակումներին կամ այլ հաղորդագրություններին ծանոթանալը կամ դրանք ընթերցելը սույն ինտերնետային կայքի այցելուին չի դարձնում Ընկերության հաճախորդ “Արժեթղթերի շուկայի մասին” Հայաստանի Հանրապետության օրենքի և դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի իմաստով:

Սույն ինտերնետային կայքում ներկայացված տեղեկատվությունը, նյութերը, հրապարակումները և այլ հաղորդագրությունները նախատեսված և հասցեագրված չեն բոլոր այն ֆիզիկական և իրավաբանական անձանց համար, ովքեր ունեն մշտական բնակություն, գրանցված են կամ այլ կերպ հաշվառված են այն պետություններում, որտեղ սույն ինտերնետային կայքում ներառված տեղեկատվության, նյութերի, հրապարակումների և այլ հաղորդագրությունների տարածումը և հրապարակումը կարող է իրականացվել միայն տվյալ պետությունների օրենքներով, կանոնակարգերով և այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով գրանցման կամ լիցենզավորման հիման վրա:

Ընկերությունը պատասխանատվություն չի կրում սույն ինտերնետային կայքում ներկայացված տեղեկատվության մեջ, նյութերում, հրապարակումներում և այլ հաղորդագրություններում առկա սխալների համար: Ընկերությունը պատասխանատվություն չի կրում սույն ինտերնետային կայքում ներկայացված տեղեկատվության, նյութերի, հրապարակումների և այլ հաղորդագրությունների հիման վրա ձեռնարկված միջոցառումների և (կամ) կատարված գործողությունների (անգործության) (այդ թվում ներդրումների) համար:

Նորությունները, շուկայի վերաբերյալ տեղեկատվությունը և սույն ինտերնետային կայքում ներկայացված և այլ աղբյուրներից ձեռք բերված տեղեկատվությունը Ընկերության կարծիքով ձեռք է բերվել վստահելի աղբյուրներից: Ընկերությունը այնուամենայնիվ չի երաշխավորում սույն ինտերնետային կայքում ներկայացված և այլ աղբյուրներից ձեռք բերված տեղեկատվության իսկությունը և հավաստիությունը:

Սույն ինտերնետային կայքում կարող են հղումներ (hyperlinks) կատարվել այլ ինտերնետային կայքերին: Ընկերությունը չի երաշխավորում այդ ինտերնետային կայքերում տեղակայված տեղեկատվության կամ նյութերի արդիականությունն ու մասշտիվությունը:

Սույն ինտերնետային կայքում նկարագրված չեն բոլոր այն տնտեսական, քաղաքական, մրցակցային և այլ գործոնները, որոնք ընկած են սույն ինտերնետային կայքում ներկայացված տեղեկատվության, նյութերի, հրապարակումների և հաղորդագրությունների հիմքում: Ընկերությունը չի երաշխավորում սույն ինտերնետային կայքում ներկայացված տեղեկատվության, նյութերի, հրապարակումների և այլ հաղորդագրությունների թարմությունը: Արժեթղթերի, ներդրումների, ֆինանսական գործիքների, ընկերությունների, շուկաների, տարածաշրջանների և այլ հանգամանքների վերաբերյալ փաստերը կամ

կարծիքները կարող են թարմ չլինել և կարող են չներկայացնել դրանց մասին Ընկերության ներկա կարծիքը:

Սույն ինտերնետային կայքում ներկայացված տեղեկատվությունը չի կարող դիտարկվել որպես ներդրումային ծառայություններ մատուցելու, արժեթղթեր ձեռքբերելու կամ վաճառելու օֆերտա կամ ներդրումային ծառայություններ ստանալու օֆերտա անելու կամ արժեթղթերի ձեռքբերելու կամ վաճառելու օֆերտա անելու հրավեր:

Սույն ինտերնետային կայքում ներկայացված որևէ տեղեկատվություն, նյութ, հրապարակում կամ այլ հաղորդագրություն չի կարող դիտարկվել որպես ներդրումային խորհրդատվություն և (կամ) ներդրումային առաջարկություն:

Մասնավորապես, սույն ինտերնետային կայքում “ձեռք բերել”, “վաճառել” կամ “պահել” բառերը (և/կամ դրանց հոմանիշները) պարունակող նախադասությունները ընդամենը պարունակում են Ընկերության կարծիքը և չպետք է դիտարկվեն որպես ներդրումային առաջարկություն կամ ներդրումային խորհրդատվություն: Ընկերությունը պատասխանատվություն չի կրում սույն ինտերնետային կայքում որևէ կերպով նշված “ձեռք բերել”, “վաճառել” կամ “պահել” ցուցումների (և/կամ դրանց հոմանիշների) հիման վրա կատարված որոշումների, ներդրումների և դրա արդյունքում առաջացող վնասների համար:

Ընկերությունը չի երաշխավորում սույն ինտերնետային կայքի մշտական հասանելիությունը: Ընկերությունը ձեռնարկում է բոլոր միջոցները սույն ինտերնետային կայքի տեղեկատվական անվտանգությունը ապահովելու համար, սակայն չի երաշխավորում վիրուսների բացակայությունը: Ուստի Ձեզ խորհուրդ է տրվում Ձեր համակարգիչը ապահովել բոլոր անհրաժեշտ հակավիրուսային ծրագրերով:

ՌԻՍԿԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐ

Սույնով Ընկերությունը ցանկանում է սույն ինտերնետային կայքի այցելողի ուշադրությունը հրավիրել մի շարք ռիսկերի վրա:

Սույն նկարագիրը չի սահմանում բոլոր հնարավոր ռիսկերի սպառիչ ցանկն ու նկարագիրը: Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ արժեթղթերում ներդրում կատարելու վերաբերյալ որոշում կայացնելիս Դուք պետք է գնահատեք և վերլուծեք ինչպես սույն փաստաթղթում ներկայացված, այնպես էլ այլ հավանական ռիսկերը:

Արժեթղթերում ներդրում կատարելու հետ կապված յուրաքանչյուր ռիսկ գնահատելիս Ձեզ խորհուրդ է տրվում ձեր գիտելիքների և փորձի շրջանակներում խորությամբ ուսումնասիրել այդ ռիսկերի ազդեցությունը արժեթղթերի վրա:

Ռիսկը արժեթղթում ներդրում կատարելու հետ կապված կորստի հավանականությունն է:

Կախված կորստի հավանականության առաջ գալու հավանականությունից կարելի է դասակարգել հետևյալ ռիսկերը.

Պետության ռիսկ կամ քաղաքական ռիսկ

Հավանականություն, որ այն պետությունում, որտեղ գրանցված են կամ պահվում են արժեթղթերը, տեղի կունենան իրադարձություններ, որոնք կազդեն տվյալ պետության քաղաքական կամ տնտեսական կայունության վրա, որի արդյունքում Դուք ամբողջությամբ կամ մասնակիորեն կկորցնեք Ձեր ներդրումը կամ կկրեք էական վնաս:

Արտարժույթային ռիսկ

Հավանականություն, որ արտարժույթի փոխարժեքը կփոխվի այնպես, որ արտարժույթով գնանշվող արժեթղթի ՀՀ դրամով արտահայտված գինը փոխվի Ձեզ համար անշահավետ ձևով:

Լիկվիդայնության ռիսկ

Հավանականություն, որ կոնկրետ պահին հնարավոր չլինի արժեթուղթը վաճառել այն գնով, որը ոչ էականորոն կտարբերվի այդ արժեթղթերով կատարված վերջին գործարքների գներից:

Գնային ռիսկ

Հավանականություն, որ արժեթղթի գինը կփոխվի Ձեզ համար ոչ ձեռնտու ձևով:

Վճարունակության ռիսկ

Հավանականություն, որ պարտքային արժեթղթի թողարկողը ժամանակին կամ ընդհանրապես չկատարի արժեթղթի սեփականատիրոջ նկատմամբ իր պարտականությունները:

Տոկոսային ռիսկ

Հավանականություն, որ Ձեր արժեթղթի հետ կապված տոկոսադրույքները կամ դրանց տարբերությունը կփոխվի այնպես, որ Դուք դրա արդյունքում կրեք վնաս:

Պահառության կամ ենթապահառության ռիսկ

Հավանականություն, որ Դուք պահառուի կամ ենթապահառուի (որն իրականացնում է Ձեր արժեթղթերի պահառությունը կամ ենթապահառությունը) անվճարունակության, անփութության կամ անօրինական գործողությունների հետևանքով լրիվ կամ մասնակիորեն կորցնեք այդ արժեթղթերը:

Հարկային ռիսկ

Հավանականություն, որ նորմատիվ իրավական դաշտի անկատարությունը կամ փոփոխությունը կարող է հանգեցնել նրան, որ Ձեր արժեթղթերով կատարվող գործառնությունների արդյունքում ստացված հասույթը կենթարկվի կրկնակի հարկման:

Իրավական ռիսկ

Հավանականություն, որ ՀՀ կամ այլ պետության արժեթղթերի շուկան կարգավորող օրենսդրության չիմացության հետևանքով Դուք ենթարկվեք քաղաքացիական, վարչական կամ այլ պատասխանատվության:

ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ԿԱՆՈՒՐԳԵԼՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ընկերությունը ձեռնարկում է բոլոր հնարավոր միջոցները շահերի բախման դեպքերը կանխելու, բացահայտելու և կառավարելու ուղղությամբ: Այդ գործառույթի իրականացման

պարտականությունն Ընկերությունը դնում է Ընկերության մեկ կամ մի քանի աշխատակցի վրա (Համապատասխանության համար պատասխանատու անձ): Այն դեպքում, երբ շահերի բախման կողմ է հանդիսանում Համապատասխանության համար պատասխանատու անձը՝ այդ գործով իր գործառույթներն իրականացնում է Ընկերության այլ աշխատակից:

Շահերի բախման կանխարգելմանն ուղղված գործառույթներն իրականացնելիս Համապատասխանության համար պատասխանատու անձն անկախ է:

Ընկերության անունից ներդրումային ծառայություններ մատուցող յուրաքանչյուր ֆիզիկական անձ, որը տեղյակ է շահերի բախման կամ շահերի բախման առաջացման հավանականության մասին, պետք է անհապաղ այդ մասին տեղեկացնի Համապատասխանության համար պատասխանատու անձին:

Համապատասխանության համար պատասխանատու անձը կարող է՝

- (1) այն դեպքում, երբ Ընկերության անունից ներդրումային ծառայություններ մատուցող ֆիզիկական անձանց միջև ծառայողական տեղեկատվության փոխանակումը կարող է վտանգել կամ վնաս հասցնել Ընկերության մեկ կամ մի քանի Հաճախորդների շահերին, վերահսկել, իսկ անհրաժեշտության դեպքում նաև արգելել այդ տեղեկատվության փոխանակումը.
- (2) առանձին վերահսկել Ընկերության անունից ներդրումային ծառայություններ մատուցող այն ֆիզիկական անձանց, որոնք ներդրումային կամ ոչ հիմնական ծառայություններ են մատուցում այն Հաճախորդներին, որոնց միջև կարող է առաջանալ կամ առաջացել է շահերի բախում.
- (3) այն դեպքում, երբ տարբեր ներդրումային ծառայություններ մատուցելու կապակցությամբ Ընկերությունում կարող են առաջանալ շահերի բախումներ, Ընկերության համապատասխան կառավարման մարմնին առաջարկություններ ներկայացնել Ընկերության անունից և նրա կազմում այդ ծառայությունների մատուցումն իրականացնող Ընկերության անունից ներդրումային ծառայություններ մատուցող ֆիզիկական անձանց աշխատավարձերի միջև ուղղակի կապի բացառմանն ուղղությամբ.
- (4) առաջարկություններ ներկայացնել Ընկերության կառավարման համապատասխան մարմնին Ընկերության անունից և նրա կազմում Հաճախորդներին ներդրումային և ոչ հիմնական ծառայությունների մատուցման կապակցությամբ Ընկերության անունից ներդրումային ծառայություններ մատուցող ֆիզիկական անձանց նկատմամբ անտեղի ազդեցությունների բացառմանն ուղղությամբ միջոցառումներ ձեռնարկելու համար.
- (5) այն դեպքում, երբ Ընկերության անունից ներդրումային ծառայություններ մատուցող ֆիզիկական անձի ներգրավումը կարող է խոչընդոտել շահերի բախման արդյունավետ կառավարմանը, Ընկերության կառավարման համապատասխան մարմնին այդպիսի իրավիճակները կանխելու կամ արգելելու ուղղությամբ ներկայացնել առաջարկություններ:

Այն պարագայում, երբ շահերի բախումը կամ դրա հավանականությունը բացահայտելու օրվանից 1 օրվա ընթացքում պարզվում է, որ շահերի բախման կանխարգելմանն ու կառավարմանն ուղղված միջոցառումները ձեռնարկելուց հետո մնում է Հաճախորդին վնաս հասցնելու ռիսկը, Համապատասխանության համար պատասխանատու անձը այդ մասին պատշաճ ծանուցում է Հաճախորդին:

Նշված ծանուցումը տեղեկություններ է պարունակում Հաճախորդի կողմից շահերի բախման հիմքում ընկած մատուցվող ծառայություններից օգտվելու վերաբերյալ որոշում կայացնելու համար:

Ընկերությունում վարվում է շահերի բախման ռեգիստր, որի հիման վրա Համապատասխանության համար պատասխանատու անձը կատարում է

ուսումնասիրություններ, բացահայտում է շահերի բախման տիպոլոգիաներ և Հնկերության կառավարման համապատասխան մարմինն է ներկայացնում շահերի բախման կանխարգելմանն ու կառավարմանն ուղղված միջաջառումների նախագծեր: